ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՏՎՈՐՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀՅԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

«...Ո՛, դստերք իմ ազնվասիրտք»
ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Մեր թվարկությունից առաջ ստեղծված և մինչև մեր օրերը հասած Սողոմոնի առակներում հանդիպում ենք այսպիսի արտահայտության. «Մի՛ հապաղեր բարի առնել կարոտյալին» (Առակք Սողոմոնի, Գ 27): Բարի գործ կատարելը, կարիքավորին օգնելը գալիս է անհիշելի ժամանակներից, սակայն լայն մասսայականություն է ստացել քրիստոնեության տարածումից հետո: Հայ հին պատմիչների ձեռագիր մատյաններում նշանակալից իրադարձությունների կողքին անպայման կհանդիպեք մեծահարուստների, Եկեղեցու բարձրաստիճան կպասավորների բարեգործությունների նկարագրություններ: Պատմահայր Մովսես Խորենացին, պատմիչներ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և ուրիշներ պատմում են բարեգործությունների շնորհիվ կառուցված վանքերի, եկեղեցիների, աղքատանոցների, բժշկանոցների, որբանոցների, ծերանոցների մասին: «Ամբողջ Հայոց երկրում մուրացկանություն անող չպետք է լինի»,- որոշել էր Ներսես Կաթողիկոսը: Բարեգործությունը համարվում էր Աստվածահաճո գործ: Թագավորների, իշխանների և առհասարակ ունևորների լավագույն տիտղոսը համարվել է «բարեգործ»-ը:

Հայոց նոր պատմությունը հարուստ է բարեգործությունների և բարեգործների կատարած գործերի նկարագրություններով. այդ մասին ստեղծվել է հարուստ պատմական գրականություն:

Մեր նպատակն է՝ վեր հանել մի բարեգործական ընկերության գործունեությունը, որի անդամ են եղել միայն կանայք և աղջիկներ, որոնց ոգեշնչել և հովանավորել են հոգևոր հայրերը: Խոսքը «Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության» մասին է, որի գործունեությունը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Կովկասի հայ իրականության ուշագրավ և հետաքրքիր երևույթներից է: Այն, ցավոք, վրիպել է մեր պատմաբանների ուշադրությունից: Նրա գործունեության մասին որևէ ուսումնասիրություն կամ հրապարակում մինչև այժմ չի կատարվել: Ներկա հոդվածը փորձ է՝ վեր հանելու այդ բարեգործական ընկերության բազմաբեղուն գործունեության հիմնական ուղղությունները:

19-րդ դարի երկրորդ հիսնամյակում Թիֆլիսը հանդիսանում էր հայ արդյունաբերական և առևտրական կենտրոն: Այնտեղ էր կենտրոնացված նաև հայ մտավո-

բականության զգալի մասը, նրանց մեջ քիչ չէին կանայք, որոնք կրթություն ստանալով ինչպես տեղում, այնպես էլ Մոսկվայի, Պետերբուրգի, Արևմտյան Եվրոպայի կրթական օջախներում, զբաղվում էին հայ մանուկների կրթության և դաստիարակության գործով, մասնակցում քաղաքի հասարակական կյանքին: Այդ կանանցից էին տիկնայք Դարիա Հովհաննիսյանը, Թագուհի Մելիք-Ազարյանը, Սոֆիա Բաբայանը, Սրբուհի Երիցյանը: Հետագայում նրանց են միանում Կատարինե Եվանգուլյանը, Նունե Ղամբարյանը, Մարիամ Խատիսյանը, Վառվառե Ռոտինյանը, Հայկանուշ Մարտիրոսյանը, Երանուհի Հարությունյանը և էլի շատ ուրիշներ: Կանանց նախաձեռնությամբ 1879 թ. դեկտեմբերի 4-ին Հովնանյան դպրոցի դահլիճում հրավիրվում է Թիֆլիսի հայ կանանց և օրիորդաց ժողով՝ նպատակ ունենալով ստեղծել մի բարեգործական մարմին՝ օգնելու համար քաղաքի չքավոր օրիորդներին՝ կյանքում իրենց տեղը գտնելու և իրենց վաստակով ապրուստ հայթայթելու համար: Ժողովում ընտրվում է ընկերության կանոնադրությունը մշակող և կազմակերպական հարցերով զբաղվող հանձնախումբ: 1880 թ. ապրիլի 7-ին Ս. Գայանյան օրիորդաց դպրոցի դահլիճում նորից հավաքվում են քաղաքի առաջադեմ հայ կանանց և օրիորդների ներկայացուցիչներ: Ժողովին մասնակցում է նաև Թիֆլիսի թեմի ներկայացուցիչ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը (Այվազովսկի): Ժողովը հավանություն է տալիս կանոնադրությանը և խնդրում Թիֆլիսի թեմի առաջնորդին՝ այն ներկայացնել Կովկասի փոխարքայի հաստատմանը: Առաջնորդարանը կատարում է այդ խնդրանքը: 1881 թ. դեկտեմբերի 31-ին փոխարքայի պաշտոնակատար իշխան Մելիքովը հաստատում է կանոնադրությունը[1]: 1882 թ. մարտի 7-ին Ս. Գայանյան օրիորդաց դպրոցի դահլիճում հանդիսավոր պայմաններում գումարվում է ընկերության հիմնադիր ժողովը: Հակիրճ ճառով այն բաց է անում Թիֆլիսի առաջնորդական փոխանորդ, գերապատիվ Մամբրե վարդապետ Սանասարյանը: Նա բարձր է գնահատում կանանց նախաձեռնությունը՝ համարելով այն «...մեծ գործ, որով հայ կինը ազատագրվում է դարեր շարունակ իրեն կաշկանդող նախապաշարմունքներից և կանգնում եվրոպական կանանց կողմից բարձրացված ազատության դրոշի ներքո: «...Այդ քայլով,- շարունակում է Մամբրե վարդապետը,- հայ կինը կամենում է ապացուցել, որ նա, բացի իր իրավունքները պահանջելուց, իր վրա է վերցնում որոշակի պարտականություններ»[2]: Մաղթելով հաջողություն սկսած գործին՝ նա հիմնադիր ժողովը հայտարարում է բացված: Ժողովականների մեջ մեծ ոգևորություն է առաջացնում Մամբրե վարդապետի ելույթը: Ընկերության անդամ են ցուցակագրվում ներկա գտնվող բոլոր տիկնայք և օրիորդները՝ թվով 144 հոգի: Կազմակերպությունը կոչվում է «Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերություն», որը հետագայում, 1912 թ., վերանվանվում է «Կովկասի Հայուհյաց բարեգործական ընկերություն»՝ իրավունք ստանալով Կովկասի հայաշատ գավառներում ևս ունենալ մասնաճյուղեր:

Ընկերության անդամ կարող էին լինել միայն իգական սեռի ներկայացուցիչներ: Պատվավոր անդամ կարող էին ընտրվել նաև տղամարդիկ, որոնք իրենց գործու-

---

[1] «Տասնամյակ Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության»: Թիֆլիս, 1892, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 10:

ներությամբ նշանակալից օգնություն և աջակցություն էին ցուցաբերել ընկերությանը: Կանոնադրությամբ ընկերության պատվավոր նախագահն էր Թիֆլիսի թեմի առաջնորդը, որի մշտական հովանավորության ներքո էր գործում ընկերության վարչությունը: Այն բաղկացած էր յոթ անդամներից, որոնք ընտրում էին ատենապետուհի, փոխատենապետուհի, ատենադպիր և գանձապահ[3]: Վարչության առաջին ատենապետուհի է ընտրվում տիկին Սրբուհի Երիցյանը:

Վարչության նիստերը գումարվում էին ատենապետուհու հայեցողությամբ կամ ըստ անհրաժեշտության: Ընդհանուր ժողովները հրավիրվում են տարեկան երկու անգամ՝ վարչության որոշմամբ կամ առնվազն քսան անդամի առաջարկությամբ: Ընդհանուր ժողովներին իր մասնակցությունն էր բերում Թիֆլիսի թեմի առաջնորդը կամ նրա փոխանորդը:

Կազմավորման առաջին իսկ օրվանից Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության վարչությունը եռանդուն գործունեություն է ծավալում ընկերության առջև դրված խնդիրների իրականացման համար: Ընկերության հիմնական նպատակը քաղաքի չքավոր օրիորդներին արհեստագործության ուսուցումն էր: Արհեստագործության դպրոց բացելու համար անհրաժեշտ էին զգալի ֆինանսական միջոցներ, որն ընկերությունը չուներ, ուստի որոշում է քաղաքի չքավոր թաղամասերից մեկում վերցնել որևէ իգական ծխական դպրոցի հովանավորությունը, որտեղ դպրոցական դասընթացի հետ մեկտեղ պետք է առանձին ուշադրություն դարձվեր ձեռագործության և տնայնագործության դասավանդմանը: Այդ խնդրով վարչությունը Թիֆլիսի առաջնորդարանի միջոցով դիմում է Էջմիածնի Սինոդին: Վերջինս դրականորեն է վերաբերվում ընկերության առաջարկությանը և 1883 թ. փետրվարին թույլատրում ընկերությանը՝ Թիֆլիսի իգական ծխական դպրոցներից մեկը, ընկերության ընտրությամբ, վերցնել իր հովանավորության ներքո և իրագործել իր նպատակը: Ընկերության վարչության անդամները ծանոթանում են քաղաքի բոլոր ծխական դպրոցներին: Դրանք էին Սուրբ Սարգիս, Զրկինենց, Զգրաշենի եկեղեցիների դպրոցները, Հավլաբարի Մարիամյան ուսումնարանը և Քամոյենց եկեղեցու դպրոցը: Վարչության անդամներին, սակայն, չեն բավարարում այդ դպրոցների պայմանները արհեստագործության ուսուցման համար: Ընկերությանը օգնության է հասնում Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը: Քաղաքի Սուրբ Նշան եկեղեցին չուներ դպրոց, և նրա ծխականները դիմել էին Առաջնորդարանին՝ օգնելու եկեղեցուն կից դպրոց բացելու խնդրանքով: Արիստակես եպիսկոպոսն ընկերության վարչությանն առաջարկում է ընդառաջել ծխականներին և եկեղեցուն կից բացել օրիորդաց դպրոց: Առաջարկը սիրով ընդունվում է վարչության կողմից: Որոշակի նախապատրաստական աշխատանքներից հետո կատարվում է աշակերտների ընդունելություն:

Սուրբ Նշան եկեղեցու դպրոցը բացվում է 1883 թ. դեկտեմբերի 14-ին, վարձու բնակարանում: Դպրոցի բացմանը ներկա էին Թիֆլիսի թեմի առաջնորդը, ընկերության անդամները և ծխականներ: Դպրոցում սովորում էին 34 աշակերտուհիներ, որոնք հիմնականում ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաներ էին՝ ար-

[3] Կանոնադրություն Հայուհյաց բարեգործական ընկերության: Թիֆլիս, 1882:

հեստավորների, մանր վաճառականների, գործակատարների, բանվորների, գրասենյակային ծառայողների, հոգևորականների երեխաներ, որոնց համար արհեստը դառնալու էր ապրուստի միջոց:

Բացի հանրակրթական առարկաներից, դպրոցում դասավանդվում էին նաև ձեռագործություն, տնարարություն և հաշվապահություն: Ուսուցումը տարվում էր անվճար, աշակերտուհիներն անվճար ստանում էին նաև դասագրքեր և ձեռագործության համար անհրաժեշտ նյութեր: Ուսուցչական կազմը հիմնականում աշխատում էր անվճար: Նրանք Եկեղեցու հայրեր էին՝ Գրիգոր քահանա Շերմազանյանը, Ղազարոս քահանա Հովսեփյանը, Աշոտ քահանա Թեմուրազյանը, օրիորդներ Ս. Լազարյանը, Կ. Ղուլիջանյանը և ուրիշներ: Աշակերտուհիներին անվճար բուժօգնություն էին ցույց տալիս բժիշկներ Դավիթ Օրբելին և Վահան Արծրունին:

1884 թ. վարչությունը դիմում է Թիֆլիսի Առաջնորդարան՝ եկեղեցու բակում դպրոցական շենք կառուցելու խնդրանքով: Շենքի շինարարության համար վարչության միջոցներից հատկացվում է 2000 ռուբլի: Իր հերթին Թիֆլիսի թեմի առաջնորդի կարգադրությամբ նույնքան գումար էլ տրամադրում է Սուրբ Նշան եկեղեցու հոգաբարձությունը: Սկսվում է դպրոցական շենքի շինարարությունը, որը, սակայն, շուտով ընդհատվում է: 1885 թ. սկզբին ցարական կառավարության հրամանով սահմանվում են եկեղեցական դպրոցների նոր կանոններ, որոնք անընդունելի էին Էջմիածնի Սինոդին: Դա պատճառ է դառնում, որպեսզի փակվեն հայկական բոլոր դպրոցները, այդ թվում նաև՝ Սուրբ Նշանի օրիորդաց դպրոցը: Ժողովրդի բողոքների և դժգոհությունների լայն ալիք է բարձրանում, որի ճնշման ներքո ցարը 1886 թ. կարգադրում է վերաբացել հայկական դպրոցները: Վերսկսվում է դպրոցական շենքի շինարարությունը և ավարտվում նույն թվականի հոկտեմբերին:

Դպրոցը մեկ հարկանի էր, ուներ չորս սենյակ և դահլիճ: 1887-88 թթ. ուսումնական տարում աշակերտների թիվը հասնում է 50-ի: Այդ տարի դպրոցը տալիս է իր առաջին շրջանավարտները, թվով 14 հոգի: Տարեցտարի ավելանում է աշակերտների թիվը, որի հետ նաև՝ բաժանմունքների քանակը: Հարց է բարձրացվում նոր դպրոց բացելու մասին, որտեղ պետք է ընդունվեին Սուրբ Նշանի դպրոցն ավարտողները: Սուրբ Նշանի օրիորդաց դպրոցում աշակերտուհիները ստանում էին կար ու ձևի վերաբերյալ նախնական գիտելիքներ, որն անբավարար էր ինքնուրույն աշխատելու համար: Նոր դպրոցը, որը կոչվում էր «Կար ու ձևի և ձեռագործի դպրոց», բացվում է 1888 թ. սեպտեմբերին: Դպրոցում, բացի Սուրբ Նշանի դպրոցն ավարտածներից, կային նաև աշակերտուհիներ Հովնանյան-Մարիամյան, Գայանյան և այլ դպրոցներից: Դպրոցի նպատակն էր՝ կար ու ձևի և ձեռագործի բնագավառում վարպետուհիների և օգնական վարպետուհիների պատրաստումը: Սկզբում ուսուցումը երեք տարի էր: Դրան ավելացվեց ևս մեկ տարի, որից հետո սանուհիները հանձնում էին հրապարակային քննություն քաղաքի արհեստավորների գլխավորի, համքարների և ընկերության վարչության անդամների ներկայացուցիչներին:

Բացի մասնագիտական գիտելիքներից, դպրոցում դասավանդվում էին նաև հանրակրթական առարկաներ՝ հայոց լեզու, կրոնի պատմություն, ռուսաց լեզու, թվաբանություն, նկարչություն, երգեցողություն, բարձր դասարաններում՝ առողջապահություն և ապրանքագիտություն: Դպրոցի շրջանավարտները պետք է լինեին

կրթված և զարգացած, որպեսզի լինեին ոչ միայն լավ վարպետներ, այլ նաև այդ մասնագիտության վարժուհիներ, որոնց պահանջը մեծ էր թե՛ ծխական դպրոցներում, և թե՛ արհեստանոցներում:

Բացի կար ու ձևի դպրոցից, տարբեր տարիների ընկերության վարչությունը բաց է անում խոհարարական դասընթացներ, գուլպայագործական, գլխարկների, կոշկակարական արհեստանոցներ, որտեղ մասնագիտական կրթություն էին ստանում տասնյակ և հարյուրավոր աղջիկներ չքավոր ընտանիքներից և հնարավորություն ստանում սեփական աշխատանքով վաստակել իրենց ապրուստի միջոցները և նեցուկ հանդիսանալ իրենց ընտանիքներին:

Ընկերության վարչությունն առանձնահատուկ հոգատարություն էր ցույց տալիս չքավոր աշակերտուհիներին. նրանց անվճար տրվում էին հագուստ, կոշիկ, դեղորայք, կարունձի անհրաժեշտ պարագաներ: Հոգ էր տարվում սանուհիների առողջական վիճակի մասին: Դպրոցի հաշվին թուլակազմ սանուհիներին արձակուրդների ժամանակ ուղարկում էին առողջարաններ:

Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության դրամական միջոցները գոյանում էին անդամավճարներից, նվիրատվություններից, կազմակերպվող համերգ-ներկայացումներից: Զգալի գումար էր ստացվում նաև նվիրատվություններից: Բացի թիֆլիսաբնակ անվանի և մեծահարուստ մարդկանցից, նվիրատվություններ էին ստացվում Մոսկվայում, Պետերբուրգում, Ռուսաստանի այլ քաղաքներում ապրող հայերից: Մշտական բարեգործների մեջ էին առևտրական և արդյունաբերական տները: «Միրզոյան եղբայրներ» նավթարդյունաբերական և առևտրական ընկերությունն ամեն տարի 300-700 ռուբլի էր տրամադրում ընկերությանը: Ալեքսանդր Մանթաշյանը, բացի ամենամյա նվիրատվություններից, 20 հազար ռուբլի էր կտակել, որը նրա ժառանգները 1912 թ. հանձնում են Հայուհյաց բարեգործական ընկերությանը[4]:

Բացի դրամական միջոցներից, ընկերությունը նվիրատվություն էր ստանում նաև գույքի ձևով. դաշնամուր, պատի ժամացույց, դասագրքեր, գրենական պիտույքներ և այլն: Իշխան Գևորգ Բեյբությանը ընկերությանն է նվիրում Ծղնեթ գյուղում ունեցած 300 սաժեն հողատարածությունը: Որոշակի եկամուտ էր ստացվում Թիֆլիսի առևտրային բանկին պահ տված գումարների տոկոսներից և սանուհիների ձեռագործ իրերի վաճառքից: Այդ ամենը հնարավորություն էր տալիս ընկերությանը ոչ միայն իրականացնել իր առջև դրված խնդիրները, այլ նաև միջոցների ներածին չափով նյութական օգնություն ցույց տալ տարերային աղետներից, ազգամիջյան ընդհարումներից տուժածներին, աղքատներին: Ազգային տոներին՝ Ծննդյան և Զատիկի տոներին կամ Սուրբ Հաղորդություն ընդունելիս չքավորներին էր տրվում յուրաքանչյուրին 3-ական ռուբլի[5]: 1906 թ., ի հիշատակ հանգուցյալ արքեպիսկոպոս Սեդրակյանի, պսակի փոխարեն վարչությունը 50 ռուբլի է հատկացնում աղետյալների օգտին, որն ուղարկվում է Թիֆլիսի նպաստամատույց

---

[4] Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության քսանհինգամյակը», 1882-1907: Թիֆլիս, 1907:
[5] Հաշիվ Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության, 1904 թ.: Թիֆլիս, 1905, էջ 19:

հանձնաժողովին[6]: Բացի դրանից, ընկերությունը դրամական օգնություն էր ցույց տալիս այն անձանց, որոնց վիճակի մասին վկայություն էին տալիս ծխատեր քահանաները: Այսպես՝ ծխատեր Գրիգոր ավագ քահանա Մանդակունին իր տված վկայությունում գրում է. «Այրի Սոնա Գրիգորյանը չորս դեռահաս զավակներով գտնվում է վերին աստիճանի չքավոր վիճակի մեջ, չունի ոչ մի տեղից օգնության հույս, այս պատճառով չքավորությունը ուժեղ թափով տիրապետել է սորանց: Ստուգությունը վկայում եմ ստորագրությամբս և անվանական կնիքույս դրոշմամբ: 7 մարտի 1911 ամի»: Նման պարագաներում ընկերությունը ցույց էր տալիս արտաքերթ օգնություն:

Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության վարչությունը, բազմաբնույթ աշխատանքներին և հոգսերին զուգընթաց, գործուն մասնակցություն էր ունենում քաղաքի և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող իրադարձություններին: Ընկերության վարչությունը մասնակցում էր Թիֆլիսի Առաջնորդարանի, Ժողովարանի խորհրդակցություններին, քաղաքի մշակութային կյանքին, արվեստի, գրականության, մանկավարժների, անվանի գործիչների մեծարման հանդեսներին:

1907 թ. ապրիլի 28-ին հանդիսավոր պայմաններում տոնվում է Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության 25-ամյա հոբելյանը: Այդ տոնակատարությանը մասնակցում էին, բացի Թիֆլիսից, Կովկասի գավառների, Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի հայաշատ վայրերի ներկայացուցիչներ: Շնորհավորական բազմաթիվ ուղերձներ էին ստացվել աշխարհի տարբեր վայրերից: Այդ ուղերձներում և հեռագրերում տրված էր հիրավի մեծ աշխատանքի գնահատականը: Մոզդոկ քաղաքի հայ կանանց և օրիորդների շնորհավորական նամակում ասվում էր. «Ձեր 25-ամյակը ապացուցեց, որ հայ կինը և օրիորդը ևս ընդունակ է գործելու հասարակական ասպարեզում և իր գործունեությամբ թեթևացնելու իր կարոտ քույրերից շատերի դառն վիճակը»[7]: «Նոր աշխատանք» պարբերականի խմբագրությունն իր ուղերձում նշում է, որ «Միայն այն ժամանակ, երբ հայ կինը կունենա հալալ ու ազնիվ աշխատանքի միջոցներ, նա ազատված կլինի տնտեսական և իրավական շղթաներից»[8]: Մանկական «Հասկեր» ամսագրի ուղերձում նշվում էր, որ «ընկերության ամենամեծ գործն այն է, որ նա դուրս է հանում հայ աղջիկներին հայ կղզիացած ընտանիքներից, գիտություն և արհեստ տալիս նրանց կյանքին դիմանալու համար»[9]: Առանձնահատուկ նշանակություն ուներ Թուրքիո Հայոց Պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ողջույնի ուղերձները: Մաղաքիա արքեպիսկոպոսն իր ողջույնի ուղերձում, շնորհավորելով Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության 25-ամյա հոբելյանը, բարձր գնահատական է տալիս նրա բեղմնավոր գործունեությանը՝ «մաղթելով ի Տեառնե և Ձեզ ի մասնավորի կարողություն և հաջողություն»[10]: Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը մեկ անգամ չէ,

---

6 Նույն տեղում, 1906 թ.: Թիֆլիս, 1907, էջ 20:

7 Եր. Հարությունյան, անձնական արխիվ, թ. 31:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, թ. 38:

որ լինում էր Թիֆլիսում, քաջաձանոթ էր ընկերության գործունեությանը: Իր կոնդակում Վեհափառը գրում է. «...Դատե՛րք իմ պատուականք, որպէս գիտէք և տեսանէք քաջ, այս քանի ամք են, յորմէ հետէ չափ աղետից և թշուառութեան ժողովրդեանս մերոյ առաւելու օրըստօրէ և կարի սակաւք են, որ զմտաւ ածիցեն խորհել դարման ինչ զայդմանէ»: Դրվատելով ընկերության գործունեությունը, Վեհափառը շարունակում է. «...Ի ձեռն ընկերութեանդ սրբեցան արտասուք աչաց բազմաց կարօտելոց, ծածկեցան մերկութիւն և քաղցելոց բաշխեցաւ հաց, հաց



Հատված Խրիմյան Հայրիկի ողջույնի ուղերձից

ոմանց ի սնունդ մարմնաւոր, այլոց գիտութեան և դաստիարակութեան ընդ խնամովք Ձերովք: Եւ քանիօն պանծացաւ այսու անուն հայուհեացն, որ մոռացեալ զգործ արութեան նախամարդ իւրոց, որոց անգոսնեալ զշուք փափկասուն կենաց աշխարհիս զօգուտ բովանդակ ազգին նախամեծար ամենայնի առնէին, նիրհէր գոգցես զնիրհ դարևոր թմրութեան: Մինչ դուք զարթուցեալ յայդմ նիրհմանէ՝ զարթուցէք և ի սիրտս այլոց բազմաց զգացմունս սիրոյ և գթութեան: Օն ուրեմն, ո՛ դստերք իմ ազնուասիրտք, յարատևեցարուք ի գործդ առաքինութեան, որով նուազեսցի չափ թշուառութեան ժողովրդեան մերոյ ի փառս Ձեր և յօրինակ այլոց և մեզ ի խինդ բերկրանաց: Օրհնեմք զվաստակս ձեռաց Ձերոց և զպտուղ բարերարութեան սրտից Ձերոց և մաղթեմք բոլորել Ձեզ նոր ևս յոբելեանս պանծալիս առաւել ևս ի շուք և ի բարեբաստութեան: Ողջ լերուք և զօրացեալք ի Տէր. ամէն»[11]:

---

11 Նույն տեղում, թ. 37:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընկերության գործունեության մեջ առաջնային կարևորություն է ստանում հայ կամավորական շոկատների հանդերձավորման և փախստականների օգնության կազմակերպման գործը: Ընկերության արհեստանոցում հայ կամավորների համար կարում էին սպիտակեղեն և այլ հանդերձանք: Փախստական չափահաս աղջիկների համար ընկերությունը բացել էր կարուձևի դասընթացներ, որտեղ նրանք արագացված կարգով սովորում էին դերձակություն: Բացի այդ, Հովնանյան դպրոցում ընկերությունը մի սենյակ է վարձակալում, որտեղ հրավիրված բժիշկը անվճար բուժօգնություն էր ցույց տալիս հիվանդ փախստականներին, նրանց տրվում էր նաև անվճար դեղորայք:

Չնայած պատերազմի հետևանքով առաջացած դժվարություններին, ընկերությունն իր գործունեությունը շարունակում է մինչև 1921 թվականը: Պատերազմից հետո ընկերությունը զրկվում է թե՛ Եկեղեցու, և թե՛ բարերարների աջակցությունից: 1921 թ. հուլիսի 26-ի ակտով ընկերությունն իր ամբողջ գույքը նվիրաբերում է նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը, «...ուր քայքայված ու տանջված հայ ժողովրդին կարող է մեծ ծառայություն մատուցել»[12]:

Այսպիսով, շուրջ 40 տարի գործելուց հետո, Կովկասի Հայուհյաց բարեգործական ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց:

[12] Եր. Հարությունյան, անձնական արխիվ, թ. 47: